Արձանագրություն N 2

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի 2026-27թթ. կարիքների բավարարման համար «ԱԱ-ԳՀԾՁԲ-26/01» ծածկագրով գնանշման հարցմամբ «Պահնորդական» ծառայության գնման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17/03/2026թ. ժամը 12[00]-ին, ք. Երևանում, Փիրումյանների 9 հասցեում, «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի շենքում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ալեքսանդր Փիլոսյանը, անդամներ՝ Հասմիկ Հայրապետյանը, Վարսիկ Գրիգորյանը և քարտուղար՝ Վարդան Դանիելյանը:

Օրակարգ
հայտերի բացման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված ժամկետում ըստ չափաբաժնի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը	Գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամարը
1	«Սուր և նիզակ» ՍՊԸ	1-ին չափաբաժին:	ՀՀ, ք. Երևան գրողների 18, հեռ. 010-62 41 83, 093-75 68 05

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի կողմից հայտերի ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտերի ծրարներում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: «

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

4. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ԲՈՄասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված էին հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը և անվանումը	Տվյալ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոց	Առաջարկած գինը/առանց ԱԱՀ-ի/	Առաջարկած գինը/ԱԱՀ-ով/
1	«Սուր և նիզակ» ՍՊԸ	1-ին չափաբաժին:	4 000 000	4 166 665	4 999 998

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. Տվյալներ նիստի կասեցման վերաբերյալ.

Հիմք ընդունելով այն, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասի բ պարբերության պահանջներով, գնահատման նիստը կասեցվում է և սահմանվում է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, որը տեղի կունենա 25/03/2026թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ա. Փիլոսյան

Անդամներ՝ Հ. Հայրապետյան

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Վ. Դանիելյան